



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ**

**ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Փամբակ համայնքի սիրելի փոքրիկ բնակիչներ, ընդունեք իմ ջերմ շնորհավորանքները՝ Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ:

Այսօր դուք ապրում եք ձեր կյանքի այն ժամանակաշրջանը, երբ յուրաքանչյուր երագ կարող է դառնալ իրականություն, իսկ մեծ ցանկության դեպքում կարող եք նվաճել ողջ աշխարհը:

Պետությունն անում է ամեն հնարավորն ու անհնարինը, որպեսզի ձեր՝ Հայաստանի Հանրապետության լիիրավ քաղաքացիների իրավունքները լինեն պաշտպանված, յուրաքանչյուր մանուկ կարողանա գտնել իր մանկությունը:


Սիրելի փոքրիկներ, ցանկանում եմ, որ ձեր բոլոր օրերն անցնեն ջերմության ու լույսի մեջ՝ պարուրված ծնողական սիրով ու հոգատարությամբ:

Մեր սրբազան պարտքն է անել այնպես, որ ոչ մի դիպված չկարողանա ձեզանից գողանալ ձեր մանկությունը. աղքատությունը, բռնությունն ու կորուստը այլևս երբեք չդաջվեն որևէ մանկական հիշողության մեջ:

Սիրելի կրտսեր ընկերներ, շնորհավորում եմ բոլորիդ՝ այս ջերմ ու արևոտ օրվա կապակցությամբ:

Ձեր մանկական ծիծաղով լցրեք ձեր շուրջը, ձեր մաքրությամբ վարակեք ամբողջ աշխարհին:

Հարգանքներով



Սուրեն Կոստանդյան

